ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

29.10.2013թ.
211-ի 1

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող որոշ դպրոցներում 1-ին եւ 2-րդ դասարանների աշակերտների ծնողներից պահանջում են ներկայացնել բժշկական տեղեկանք երեխայի առողջության վերաբերյալ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ Կրթության եւ գիտության նախարարությունից, ՀՀ առողջապահության նախարարությունից եւ Երեւանի քաղաքապետարանից ստացել է բանավոր պարզաբանում, որի համաձայն՝ նշված բժշկական տեղեկությունները՝ տեղեկանքը, համապատասխան բժշկական հաստատությունից ստանում է դպրոցի բժշկական աշխատողը, եւ ծնողը նման փաստաթուղթ հայթայթելու պարտականություն չունի, չունի նաեւ նման հնարավորություն, քանի որ բժշկական հաստատությունը նշված փաստաթուղթը տրամադրում է բացառապես դպրոցին: Սակայն, այժմ նույնպես դպրոցներում շարունակում են երեխայի առողջության վերաբերյալ բժշկական փաստաթուղթը պահանջել ծնողից:

Հարցի շուրջ լիարժեք տեղեկատվություն ստանալու համար ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հանրակրթական դպրոցների 1-ին եւ 2-րդ դասարանների աշակերտների ծնողները պարտավո՞ր են արդյոք դպրոցին ներկայացել բժշկական տեղեկանք երեխայի առողջության վերաբերյալ,
2. Եթե այո, ապա ո՞ր իրավական ակտով է սահմանվում ծնողների նման պարտականությունը,
3. Եթե ոչ, ապա ու՞մ պետք է տրամադրվի (ո՞վ պետք է ստանա) երեխայի առողջության վերաբերյալ բժշկական փաստաթուղթը,
4. Որ իրավական ակտով է սահմանվում երեխայի առողջության վերաբերյալ բժշկական փաստաթուղթը տրամադրելու (ստանալու) կարգը,
5. Խնդրում ենք տրամադրել նաեւ վերոնշյալ իրավական ակտերի (կամ իրավական ակտերի համապատասխան հոդվածների) պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում*:* Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան